

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԲՐՈԿ» բաց բաժնետիրական
ընկերության 17.05.2011 թ. կայացած
արտահերթ ընդհանուր ժողովի
որոշմամբ

Փոփոխված է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» բաց
բաժնետիրական ընկերության և
«ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆԹՄ» փակ
բաժնետիրական ընկերության
բաժնետերերի համատեղ ընդհանուր
ժողովի 26/12/2019 թիվ 3 որոշմամբ

Փոփոխված է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» բաց
բաժնետիրական ընկերության
բաժնետերերի 31.03.2021թ-ի արտահերթ
ընդհանուր ժողովի թիվ 2 որոշմամբ

ժողովի նախագահ՝

_____ Արամ Կայֆաջյան

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է
ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝

«ԱՐՄԲՐՈԿ»

Բ Ա Ց Բ Ա Ժ Ն Ե Տ Ի Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(փ ո փ ո խ վ ա ծ)

1. Բովանդակություն

1. Կանոնադրությունում օգտագործվող հիմնական հասկացությունները	3
2. Ընդհանուր դրույթներ	3
3. Ընկերության գործունեության առարկան ու նպատակը.....	5
4. Ընկերության իրավական վիճակը, իրավունքներն ու պարտականությունները	6
5. Ընկերության առանձնացված ստորաբաժանումներ, դուստր և կախյալ ընկերություններ.....	8
6. Ընկերության կանոնադրական կապիտալը	9
7. Բաժնետոմսեր և այլ արժեթղթեր.....	11
8. Բաժնետերերի իրավունքները և պարտականությունները	14
9. Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը.....	16
10. Ընկերության կառավարման մարմինները	17
11. Ընկերության գործունեության վերահսկումը.....	23
12. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը	24
13. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը.....	25

1. Կանոնադրությունում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. **Ընկերություն** – «ԱՐՄԲԲՈԿ» բաց բաժնետիրական ընկերություն
(Սույն կետը փոփոխվել է «ԱՐՄԵՆԲԲՈԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 31.03.2021թ-ի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2 որոշմամբ)
2. **Ժողով** – Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով
3. **Տարեկան ժողով** – Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով
4. **Խորհուրդ** – Ընկերության տնօրենների խորհուրդ
5. **Գլխավոր տնօրեն** – Ընկերության միանձնյա գործադիր մարմին
6. **Ներքին աուդիտ** – ներքին աուդիտի անկախ ստորաբաժանում
7. **Կանոնադրություն** – Ընկերության կանոնադրություն
8. **Օրենսգիրք** – Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգիրք
9. **Օրենք** – «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
10. **Կենտրոնական բանկ** – Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ

2. Ընդհանուր դրույթներ

2.1. «ԱՐՄԲԲՈԿ» բաց բաժնետիրական ընկերությունը համարվում է առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի, որոնց տերերը իրավունք ունեն օտարել իրենց պատկանող բաժնետոմսերն առանց Ընկերության մյուս բաժնետերերի համաձայնության: Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված, ինքնուրույն հաշվեկշռում հաշվառված գույք:

(Սույն կետը փոփոխվել է «ԱՐՄԵՆԲԲՈԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 31.03.2021թ-ի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2 որոշմամբ)

31.03.2021 թվականին Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Ընկերության անվանումը «ԱՐՄԵՆԲԲՈԿ» բաց բաժնետիրական ընկերությունից փոփոխել «ԱՐՄԲԲՈԿ» բաց բաժնետիրական ընկերության:

(Պարբերությունն ավելացվել է «ԱՐՄԵՆԲԲՈԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 31.03.2021թ-ի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2 որոշմամբ)

Ընկերությունը հանդիսանում է «ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆՏՍ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 27.06.2008 թ. թիվ 123 ՕՕՀ Ա որոշմամբ, գրանցման համարը՝ 6) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան (միացում): *(Պարբերությունն ավելացվել է «ԱՐՄԵՆԲԲՈԿ» բաց բաժնետիրական ընկերության և «ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆՏՍ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի 26.12.2019թ-ի համատեղ ընդհանուր ժողովի թիվ 3 որոշմամբ)*

Ընկերությունը ստեղծվել է «ԱՐՄԵՆԲԲՈԿ» բաց բաժնետիրական ընկերության (գրանցված Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից 23.01.2008 թ., գրանցման թիվ՝ 286.130.06749,

վկայական՝ 03 Ա 079494) և «ՄԱՍՏԵՐ ԿԱՊԻՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցված Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Շենգավիթի տարածքային բաժնի կողմից 04.07.2008 թ., գրանցման թիվ՝ 269.110.03510, վկայական՝ 03 Ա 081587) միաձուլման ճանապարհով վերակազմակերպման միջոցով և հանդիսանում է նրանց իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:

Ընկերության իրավանախորդ «ԱՐՄԵՆԲԲՈՎ» բաց բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է «ԱՐՄԵՆԲԲՈՎ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 05.07.1994 թ., գրանցման թիվ՝ 286.110.00117, վկայական՝ 01 Ա 013837) վերակազմավորման (տեսակի փոփոխություն) ճանապարհով վերակազմակերպման միջոցով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«ԱՐՄԵՆԲԲՈՎ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Հայ-Կանադական «ԱՐՄԲԲՈՎ» համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցված Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 05.07.1994 թ., գրանցման թիվ՝ 286.110.00117, վկայական՝ 01 Ա 013837) վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման միջոցով և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

Հայ-Կանադական «ԱՐՄԲԲՈՎ» համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանում է «ԱՐՄԲԲՈՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավահաջորդը (անվանման փոփոխություն):

2.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (Կենտրոնական բանկի կողմից գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (գրանցումից հանելու մասին ներդրումային ընկերությունների գրանցումների մատյանում գրառման) պահից:

2.3. Ընկերությունն ունի կլոր կնիք, որը պարունակում է իր ֆիրմային անվանումը և հատուկ տարբերանշանը:

Ընկերությունն կարող է ունենալ նաև իր ֆիրմային անվանումը պարունակող ձևաթղթեր, խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային (սպասարկման) նշան ու անհատականացնող այլ միջոցներ:

(Սույն կետը փոփոխվել է «ԱՐՄԵՆԲԲՈՎ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 31.03.2021թ-ի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2 որոշմամբ)

2.4. Ընկերության գործունեությունը կարգավորվում է Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև Կանոնադրությամբ:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող այլ նորմեր, քան բովանդակում է Կանոնադրությունը, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

2.5. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենքով և Կանոնադրությամբ:

2.6. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

Բաժնետերերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

2.7. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ են հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ այլ կերպ Ընկերության գործունեությունը կանխորոշելու հնարավորություններ, նշված բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորություններով: Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են վերը նշված իրենց իրավունքը կամ հնարավորությունները, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

2.8. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

2.9. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «ԱՐՄԲՐՈԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն

Կրճատ՝ «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ

Ռուսերեն լրիվ՝ Открытое Акционерное Общество «АРМБРОК»

Կրճատ՝ ОАО «АРМБРОК»

Անգլերեն լրիվ՝ “ARMBROK” Open Joint Stock Company

Կրճատ՝ “ARMBROK” OJSC:

(Սույն կետը փոփոխվել է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 31.03.2021թ-ի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2 որոշմամբ)

2.10. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝

0018, ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի պող., 32/1 շ. թիվ 8 տարածք:

3. Ընկերության գործունեության առարկան ու նպատակը

3.1. Ընկերության ստեղծման նպատակն է գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

3.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակն է ներդրումային ծառայությունների իրականացումը:

3.3. Ընկերությունը կարող է իրականացնել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված ցանկացած գործունեություն:

Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում է ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի հիման վրա: Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչելի ու դեպքում Ընկերությունը ենթակա է լուծարման՝ օրենքով սահմանված կարգով:

3.4. Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

4. Ընկերության իրավական վիճակը, իրավունքներն ու պարտականությունները

4.1. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:

Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտարժույթով:

4.2. Ընկերությունը իրավունք ունի իր կողմից թողարկվող բաժնետոմսերը տեղաբաշխել ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով և իրականացնել դրանց ազատ վաճառքը Օրենքի և այլ իրավական ակտերի համապատասխան:

4.3. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր ու կախյալ) հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

4.4. Ընկերությունն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,
- ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) քաղաքացիներին,
- օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) անդամակցել իրավաբանական անձանց,
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,
- ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,
- օգտվել օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

4.5. Ընկերությունը պարտավոր է.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն,
- օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթների և վնասների հաշիվը,
- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

- օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,
- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության պետական գրանցման վկայականի, կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Ընկերության փոխկապակցված անձանց, նշանակալից ու խոշոր բաժնետերերի ցուցակների, կնքած պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը իր գտնվելու վայրում,
- իր բաժնետերերին հնարավորություններ ստեղծել ծանոթանալու Ընկերության վերը թվարկված փաստաթղթերի հետ (բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք պարունակում են գաղտնի տեղեկություններ),
- կրել օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

5. Ընկերության առանձնացված ստորաբաժանումներ, դուստր և կախյալ ընկերություններ

5.1. Ընկերությունն իրավունք ունի Կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

Ընկերության մասնաճյուղ է համարվում նրա առանձնացված ստորաբաժանումը, որը տեղակայված է Ընկերության գտնվելու վայրից դուրս և իրավունք ունի իրականացնել Ընկերության բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը, ներառյալ ներկայացուցչական գործառնությունները:

Ընկերության ներկայացուցչություն է համարվում նրա առանձնացված ստորաբաժանումը, որը տեղակայված է Ընկերության գտնվելու վայրից դուրս, ներկայացնում է Ընկերության շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

5.2. Մեկ այլ ընկերություն համարվում է Ընկերության դուստր ընկերություն, եթե Ընկերությունը այդ ընկերության կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ օրենքով չարգելված այլ ձևով (այդ թվում՝ հիմնական և դուստր ընկերությունների միջև կնքված պայմանագրին համապատասխան) հնարավորություն ունի կանխորոշելու ընկերության որոշումները:

Մեկ այլ ընկերություն համարվում է Ընկերության կախյալ ընկերություն, եթե Ընկերությունն ունի այդ ընկերության բաժնեմասերի (քվեարկող բաժնետոմսերի) ավելի քան քսան տոկոսը:

Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Դուստր ընկերությունը պարտավորություն չի կրում Ընկերության պարտավորությունների համար:

Ընկերությունը համապարտ պատասխանատվություն է կրում դուստր ընկերության այն գործարքների համար, որոնք կատարվում են ի իրականացումն Ընկերության կողմից տրված և դուստր ընկերության համար պարտադիր կատարման ենթակա ցուցումների:

Ընկերության մեղքով դուստր ընկերության անվճարունակության դեպքում Ընկերությունը լրացուցիչ պատասխանատվություն է կրում դուստր ընկերության պարտավորությունների համար:

Դուստր ընկերության բաժնետերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել նրա մեղքով դուստր ընկերությանը պատճառած վնասների հատուցում: Վնասները Ընկերության մեղքով պատճառված են համարվում, եթե դրանք վրա են հասել դուստր ընկերության կողմից Ընկերության պարտադիր ցուցումներ կատարելու հետևանքով:

Ընկերությունը պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին:

6. Ընկերության կանոնադրական կապիտալը

6.1. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել Օրենքով սահմանված չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

6.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 267,150,000 (երկու հարյուր վաթսուներեք միլիոն հարյուր հիսուն հազար) դրամ, որը կազմում է 267,150 հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 դրամ:

Բոլոր 267,150 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 3,000,000 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ անվանական արժեքով:

Հայտարարված սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ժողովի՝ դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված կարգով և ժամկետում:

6.3. Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել Ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում Կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և ներդրումային ընկերությունների գրանցումների մատյանում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

6.3.1. Կանոնադրական կապիտալի ավելացում:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է ավելացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:

Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի սեփականատերերը բաժնետերերից առաջ ունեն իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Ընկերության նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի սեփականատերերի նախապատվության իրավունքի (նոր բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է 15 օր: Ընկերության բաժնետերերի կողմից նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է 30 օր:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝

- լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) և յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի քանակն այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում:
- լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

Ընկերությունն իր ամենամյա գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

- շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (գուտ ակտիվները) կամ դրա մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:

6.3.2. Կանոնադրական կապիտալի նվազեցումը:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ և բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում՝ Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը կդառնա ավելի փոքր Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նվազագույն չափից: Ընկերության կողմից կանոնադրական կապիտալը Օրենքով սահմանված նվազագույն չափից նվազեցնելը հիմք է Ընկերության լուծարման:

Ընկերության կանոնադրական կապիտալը թույլատրվում է նվազեցնել Օրենքով սահմանված կարգով՝ նրա բոլոր պարտատերերին տեղեկացնելուց հետո: Այդ դեպքում Ընկերության պարտատերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է Ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման կապակցությամբ բաժնետերերին վճարումները կատարվում են Ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումից հետո:

7. Բաժնետոմսեր և այլ արժեթղթեր

7.1. Ընկերությունը կարող է տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:

7.2. Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի 25 տոկոսը:

Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միննույնը:

Ընկերության որոշակի տեսակի (միանման տարբերակիչ բնորոշ առանձնահատկություններ՝ անվանական արժեք, հավաստող իրավունքներ, արտոնություններ և սահմանափակումներ ունեցող) ամեն մի արտոնյալ բաժնետոմս ունի միննույն անվանական արժեքը:

Ընկերությունը ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում կարող է թողարկել հաստատագրված և (կամ) փոփոխական շահութաբաժնով (անկախ Ընկերության տնտեսական գործունեության արդյունքից), ինչպես նաև աշխատակցի արտոնյալ բաժնետոմսեր:

Եթե արտոնյալ բաժնետոմսերի որոշակի դասերի համար Օրենքով այլ բան նախատեսված չէ, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ժողովում ձայնի իրավունք չունեն:

Արտոնյալ բաժնետոմսերը կարող են փոխարկվել հասարակ (սովորական) բաժնետոմսերի: Ընդ որում փոխարկելու ժամանակ Ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել պարտքերն այլ ձևով:

Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

7.3. Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր, ինչպես նաև փաստաթղթային (տպագրական եղանակով պատրաստված) կամ ոչ փաստաթղթային ձևի պարտատոմսեր:

7.4. Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո ընկերությունը պետք է ապահովի բաժնետերերի բաժնետոմսերի գրանցումը իր բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում՝ բաժնետերերի ռեեստրի վարման Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կանոններին համապատասխան:

7.5. Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

7.6. Ժողովի կողմից որոշված կարգով կարող է աշխատակիցներին տրամադրվել ինչպես հասարակ (սովորական), այնպես էլ արտոնյալ (դրանց առկայության դեպքում) բաժնետոմսեր:

Աշխատակցի բաժնետոմսի սեփականատերերը, օգտվում են նույն իրավունքներից, ինչպիսիք սահմանված են Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ՝ դրանց համապատասխանող հասարակ (սովորական) կամ տարբեր դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար:

Աշխատակցի բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է տարբերվի Ընկերության հասարակ (սովորական) և համապատասխան դասի արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքից:

7.7. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարում են լրիվ արժեքով:

Ընկերության հիմնադրման ժամանակ բաժնետոմսերի դիմաց հիմնադիրների կողմից վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է հիմնադիրների միջև համաձայնեցմամբ, իսկ բաժնետոմսերի և այլ արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում՝ Խորհրդի որոշմամբ՝ Օրենքով սահմանված կարգով և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից:

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում՝ Ժողովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:

7.8. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

7.9. Ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահութաբաժինների վճարման, աշխատակիցների բաժնետիրացման, սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

7.10. Ընկերության գուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվետվության տվյալներով՝ օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Եթե Ընկերության գոյության երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության գուտ ակտիվների արժեքը Ընկերության կանոնադրական կապիտալից պակաս է, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը:

Ընկերության կողմից կանոնադրական կապիտալն օրենքով սահմանված նվազագույն չափից նվազեցնելը հանգեցնում է Ընկերության լուծարման:

Եթե Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցման կամ Ընկերության լուծարման մասին որոշում չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից լիազորագրված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում՝ դատական կարգով:

8. Բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

8.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը Օրենքի և Կանոնադրության համաձայն իրավունք ունի.

- մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ Տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և Ներքին աուդիտի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,
- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենքով և Կանոնադրությամբ այլ բան չի նախատեսված,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5 % կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել աուդիտոր՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը,
- Ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- Ժողովում հանդես գալ առաջարկություններով,
- Ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
- հայցով դիմել դատարան՝ Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

- Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
- օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,
- օգտվել Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Ընկերությունը պարտավոր է իր բաժնետերերին հնարավորություններ ընձեռել Օրենքով սահմանված փաստաթղթերին ծանոթանալու համար: Բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը հնգօրյա ժամկետում պարտավոր է նրան տրամադրել Օրենքով սահմանված փաստաթղթերի պատճենները, բացառությամբ գաղտնի տեղեկությունների և Գլխավոր տնօրենի հրամանների ու հրահանգների: Պատճեններ տրամադրելու համար վճարի չափը չի կարող դրանց պատրաստման և փոստային առաքման ծախսերից ավելի լինել:

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեսակարար կշիռը Ընկերության կանոնադրական կապիտալում չպետք է պակաս լինի 75 տոկոսից:

8.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն.

- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- Ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իրենց հասանելիք մասը,
- Ժողովում հանդես գալ առաջարկություններով,
- ձայնի իրավունքնով մասնակցել Ժողովի աշխատանքներին,
- ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը:

Վերջին 4 ենթակետերով սահմանված իրենց իրավունքներից արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը օգտվում են` Օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

8.3. Բաժնետերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ:

8.4. Ընկերության կանոնադրական կապիտալում 10 և ավելի տոկոս ձեռք բերելու կամ մասնակցությունը ավելացնելու մտադրություն ունենալու դեպքում անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմում:

Օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ վերջիններիս հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Ընկերության

կանոնադրական կապիտալում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

9. Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը

9.1. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Հայտարարված շահութաբաժինները վճարվում են ինչպես դրամով, այնպես էլ այլ գույքով:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության կուտակված շահույթից: Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել այդ նպատակի համար հատուկ ստեղծված Ընկերության հիմնադրամների հաշվից:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

Եթե Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է Ժողովի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավել լինել:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ժողովի՝ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցանկ, որում պետք է ընդգրկվեն՝

- միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ,
- տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

9.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին շահութաբաժինների վճարման առանձնահատկությունները.

9.2.1. Ընկերության տվյալ տարվա գործունեության արդյունքների հիման վրա հասարակ (սովորական) բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինն արտոնյալ բաժնետոմսերի համար սահմանված շահութաբաժինը գերազանցելու դեպքում, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը Ժողովի որոշմամբ կարող են ստանալ հասարակ (սովորական) բաժնետոմսերին հասանելիք փաստացի շահութաբաժինը:

9.2.2. Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերության դատական կարգով լուծարման համար:

9.3. Ընկերությունն իրավունք չունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,
- Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ Օրենքին համապատասխան,
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սննկացման) հայտանիշներին, կամ նշված հայտանիշները ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,
- Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

10. Ընկերության կառավարման մարմինները

10.1. Ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել Ժողով՝ Տարեկան ժողով:

Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 4 ամսվա ընթացքում:

Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ընկերության բաժնետերերի ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ գրավոր որոշմամբ: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև գլխավոր տնօրենի, Ներքին աուդիտի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով: Եթե Օրենքով սահմանված ժամկետում Խորհուրդը արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:

Ժողովի գումարման մասին որոշմամբ պետք է սահմանվի.

- ա) Ժողովի գումարման ամսաթիվը, տեղը և ժամանակը,
- բ) Ժողովի օրակարգը,
- գ) Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը,
- դ) Ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,
- ե) Ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը,
- զ) Ժողովի քարտուղարի անունը, ազգանունը,
- է) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

Ժողովի ծանուցման ձև է սահմանվում ծանուցումը բաժնետերերին, ներքին աուդիտի անդամներին և Ընկերության աուդիտն իրականացնող անձին (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում) պատվիրված նամակներ ուղարկելու կամ անձամբ հանձնելու կամ էլեկտրոնային փոստով առաքելու ձևը:

Ընկերությունը պարտավոր է Ժողովի գումարման մասին իր բաժնետերերին սույն կետով սահմանված կարգով ծանուցել Ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ:

Ժողովներում նախագահում է Խորհրդի նախագահը (Խորհուրդ չընտրվելու դեպքում՝ Գլխավոր տնօրենը), իսկ նրա բացակայության դեպքում՝ Ժողովը նախագահում է Ժողովին ներկա բաժնետերերից ամենատարեցը, եթե Ժողովի գումարման մասին որոշմամբ այլ անձ նշանակված չէ:

10.2. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

1. Կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
2. Ընկերության վերակազմակերպումը,
3. Ընկերության լուծարումը,
4. Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

5. Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
6. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
7. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
8. տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
9. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,
10. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
11. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
12. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը),
13. Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը,
14. Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
15. դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը,
16. հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,
17. հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը:

Ժողովը իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով ու Կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

10.3. Կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը վերապահված հարցերի լուծումը չի կարող փոխանցվել Գլխավոր տնօրենին, բացառությամբ 10.2. կետի 15 և 17 ենթակետերով նախատեսված դեպքերի:

Ժողովի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել որոշում ընդունելու համար Խորհրդին, բացառությամբ 10.2. կետի 9, 14, 15, 16 և 17 ենթակետերով նախատեսված դեպքերի:

10.4. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բաժնետերերը:

10.5. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 10.7. կետում սահմանված դեպքերից:

10.6. Կանոնադրության 10.2. կետի 2, 9, 11 - 14 ենթակետերով նախատեսված դեպքերում որոշումներն ընդունվում են ժողովի կողմից Խորհրդի ներկայացմամբ:

10.7. Սույն կանոնադրության 10.2. կետի 1, 2, 3, 4, 6, 8, 13 ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են ժողովի կողմից ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, ընդ որում 3 և 8 ենթակետերով սահմանված դեպքերում կողմ ձայների քանակը չպետք է պակաս լինի ընդհանուրի երկու երրորդից:

10.8. Ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է հաղորդվեն ընկերության բաժնետերերին (ըստ պահանջի) 45 օրվա ընթացքում:

10.9. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով գանգատարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնադրության պահանջների խախտմամբ ժողովի կողմից ընդունված որոշումը, եթե նա չի մասնակցել ժողովին կամ այդ որոշմանը դեմ է քվեարկել և որոշմամբ խախտվել են նրա օրինական շահերը և իրավունքները: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել ժողովի որոշումը, եթե որոշումը բողոքարկող բաժնետերերի (բաժնետերերի) քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, թույլ տված խախտումները էական չեն և որոշումը վնաս չի պատճառել որոշումը բողոքարկող բաժնետերերին):

10.10. Ժողովի որոշումները (բացի 10.2. կետի 11-րդ ենթակետով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումներից) կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): 10.2. կետի 11-րդ ենթակետով սահմանված հարցերի քննարկումը և համապատասխան որոշումների ընդունումը տեղի է ունենում բացառապես Տարեկան ժողովներում: Եթե Տարեկան ժողով տեղի չի ունեցել կամ համապատասխան որոշումներ չեն ընդունվել, ապա հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր չեն կարող քննարկվել, բացի կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումը օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնք պետք է տրամադրվեն բաժնետերերին քվեաթերթիկները ընդունելու պահից առնվազն 30 օր շուտ:

10.11. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տեղաբաշխված ինչպես հասարակ (սովորական), այնպես էլ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրենց պատկանող լրիվ վճարված սովորական (արտոնյալ) բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով:

Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող Խորհրդի անդամները, Գլխավոր տնօրենը, ինչպես նաև ներքին աուդիտի անդամները և աուդիտն իրականացնող անձը:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

10.12. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Խորհուրդը:

Խորհրդի անդամները ընտրվում են Ժողովի կողմից՝ մեկ տարի ժամանակով: Խորհրդի ընտրությունները կարող են իրականացվել ինչպես սովորական, այնպես էլ գումարային (կոմույաստիվ) քվեարկությամբ:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
2. Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
3. Ժողովի օրակարգի հաստատումը,
4. գույքի շուկայական արժեքի որոշումը,
5. Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռք բերումը Օրենքով նախատեսված դեպքերում,
6. Գլխավոր տնօրենի նշանակումը, նրա աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
7. Ընկերության ներքին աուդիտի անկախ ստորաբաժանման ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
8. պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
9. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը,
10. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովի առաջարկությունների նախապատրաստումը,
11. Ընկերության բաժնետոմսերի միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
12. Ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը,
13. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
14. խոշոր գործարքների կատարման մասին որոշման ընդունումը Օրենքով սահմանված դեպքերում,

15. այլ կազմակերպություններին մասնակցության մասին որոշման ընդունումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,
16. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
17. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
18. հաստիքացուցակի հաստատումը,
19. ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
20. Օրենքով և Կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, ընդ որում ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք: 10.12. կետի 14-րդ ենթակետով սահմանված դեպքում որոշումն ընդունվում է Խորհրդի միաձայն որոշմամբ:

10.13. Ժողովի որոշմամբ Խորհուրդ չստեղծվելու կամ Խորհրդի լիազորությունները դադարեցնելու դեպքում Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը ենթակա են Ժողովի իրավասությանը, բացի 10.12. կետի 2, 3, 5, 10, 17, 18 և 19 ենթակետերով սահմանված հարցերից, որոնք փոխանցվում են Գլխավոր տնօրենի իրավասությանը:

Ժողովի որոշմամբ Խորհրդի նախագահի և Գլխավոր տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել (Օրենքով թույլատրված դեպքերում):

Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից, Խորհրդի անդամների կազմից՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

Բացառությամբ սույն կետում նախատեսված դեպքից, Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

10.14. Խորհրդի նախագահը՝

1. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
2. գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
4. նախագահում է Ժողովներում:

10.15. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գլխավոր տնօրենը:

Գլխավոր տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից: Գլխավոր տնօրենը կազմակերպում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց և իրավունք չունի ինչպես Ժողովի, այնպես էլ Խորհրդի համար պարտադիր որոշումներ կայացնելու:

Գլխավոր տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության հիմնադիրների (բաժնետերերի)

պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Գլխավոր տնօրենը՝

1. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,
2. ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
3. գործում է առանց լիազորագրի,
4. տալիս է լիազորագրեր,
5. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
6. բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,
7. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության ղեկավար անձանց և աշխատակիցների գործունեությունը կարգավորող ներքին կանոնները և կանոնակարգերը, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնակարգերը,
8. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
9. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,
10. աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Ժողովի որոշմամբ Ընկերության գործադիր մարմնի (ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ) լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

11. Ընկերության գործունեության վերահսկումը

11.1. Ընկերության գործունեության վերահսկումն իրականացնելու համար Խորհուրդը ընտրում է Ներքին աուդիտ: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Ընկերության կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներն ու աշխատակիցները, ինչպես նաև վերջիններիս հետ փոխկապակցված անձինք:

Ներքին աուդիտը կարող է կազմված լինել մեկ անձից:

11.2. Ներքին աուդիտի գործունեության կարգը սահմանվում է Խորհրդի կողմից հաստատվող ներքին փաստաթղթով՝ ներքին աուդիտի անկախ ստորաբաժանման գործունեության կանոնակարգով:

Ներքին աուդիտը՝

1. հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ,
2. ստուգում է Ընկերության գործունեության համապատասխանությունն օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, կարգավորվող շուկայի կանոններով,

Ընկերության գործունեության կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին,

3. տալիս է եզրակացություններ և ներկայացնում առաջարկություններ իրավասու կառավարման մարմնի ներկայացրած և այլ հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

11.3. Ներքին աուդիտը պարտավոր է հայտնել Գլխավոր տնօրենին, Խորհրդին, համապատասխան կարգավորվող շուկայի օպերատորին և Կենտրոնական բանկին Ընկերության կողմից օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված պահանջների ցանկացած խախտման, ինչպես նաև հաճախորդների շահերին հասցված ցանկացած էական վնասի մասին՝ դրանց հայտնաբերման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտը օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում, պարտավոր է դրանք ներկայացնել Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

Ներքին աուդիտի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

11.4. Ընկերության ամենամյա ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Ընկերությունը պարտավոր է ներգրավել Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ աուդիտորի (արտաքին աուդիտ): Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքում ներկայացնում է գրավոր եզրակացություն:

Ընկերության ամենամյա ֆինանսական հաշվետվության վերստուգումը կարող է կատարվել նաև նրա բաժնետերերից յուրաքանչյուրի պահանջով: Այս դեպքում վերստուգումը կատարվում է այն պահանջող բաժնետիրոջ հաշվին:

Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքվում է Խորհրդի կողմից, որը և որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը:

Ընկերության գործունեության վերստուգումն այն բաժնետերերի պահանջով, որոնց հանրագումար բաժինը կանոնադրական կապիտալում կազմում է տասը և ավելի տոկոս, պետք է անցկացվի ցանկացած ժամանակ:

12. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը

12.1. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում Ժողովի որոշմամբ, որն ընդունվում է Ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում՝ ձայների մեծամասնությամբ:

12.2. Կանոնադրության մեջ կատարված փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից:

13. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

13.1. Ընկերությունը Ժողովի որոշմամբ կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել: Ընդ որում Ընկերությունը կարող է վերակազմակերպվել բացառապես մեկ այլ ներդրումային ընկերության հետ միացման կամ վերակազմավորման միջոցով:

Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով և այլ օրենքներով:

13.2. Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության:

13.3. Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

Ընկերության լուծարման մասին որոշումը կայացվում է Ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

13.4. Ընկերությունը վերակազմավորվելիս վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձի պետական գրանցման պահից:

Ընկերությունն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս վերակազմակերպված է համարվում միացող ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ ներդրումային ընկերությունների գրանցումների մատյանում գրառման պահից:

13.5. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած այդ մասին ներդրումային ընկերությունների գրանցումների մատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից: